



Այսօր՝ ապրիլի 18-ին, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում բացվել է «Երևանի մշակութային ժառանգությունը և կայուն զբոսաշրջությունը. Էրեբունի, Կարմիր բլուր, Շենգավիթ» խորագրով ցուցահանդես: Այն կազմակերպվել է «Էրեբունի» արգելոց-թանգարանի և ԻԿՕՄՕՍ/Հայաստան կազմակերպության համատեղ ջանքերով Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակում: Ցուցահանդեսի բացմանը ներկա են գտնվել պատմամշակութային ժառանգության և զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչները:

Բացման խոսքով հանդես է եկել «Էրեբունի» թանգարանի տնօրեն, ԻԿՕՄՕՍ/Հայաստանի նախագահ Գ. Գյուրջյանը՝ շնորհավորելով հուշարձանների պահպանությամբ զբաղվող մասնագետներին: Ողջունի և շնորհավորական խոսքեր են ուղղել Երևանի քաղաքապետարանի Մշակույթի և տուրիզմի վարչության պետ Ռ. Հովհաննիսյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մ. Մինասյանը, Տուրիզմի ինստիտուտի ռեկտոր Ռ. Մինասյանը և այլք: Ցուցահանդեսում ներկայացված են Էրեբունի, Կարմիր բլուր և Շենգավիթ հնավայրերի վերականգնման և այցելուների սպասարկման արդիականացման խնդիրները՝ մանրակերտների, գծագրերի և տեղեկատվական պաստառների միջոցով: ԻԿՕՄՕՍ/Հայաստանի և «Էրեբունի» արգելոց-թանգարանի համատեղ ջանքերով կազմակերպված «Երևանի մշակութային ժառանգությունը և կայուն զբոսաշրջությունը. Էրեբունի, Կարմիր բլուր, Շենգավիթ» ցուցահանդեսը՝ կգործի մինչև 2017թ. մայիսի 8-ը: